ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

« 26 » 10 2026 թ. N ԿԱ/40

Հ Ր Ա Մ Ա Ն

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի N 37-Լ հրամանով հաստատված Միասնական սոցիալական ծառայության կանոնադրության 18-րդ կետի 10-րդ ենթակետով, հիմք ընդունելով Ծառայության պետի 2026 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՀՁ/4-2026 ներքին հանձնարարականը, ամփոփ վերլուծությունների և ռիսկերի կառավարման վարչության պետի 2026 թվականի ներքին/ՆՄ/100096-2026 զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանով մշակվող պարբերական և միանվագ դրամական վճարների (այսուհետ՝ նաև նպաստներ) գումարների վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն հրամանի հավելվածի:

2. Ընդունել ի ղեկավարումն, որ եթե նպաստի վճարման ժամկետի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա նպաստի վճարումն իրականացվում է ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը:

3. Ամփոփ վերլուծությունների և ռիսկերի կառավարման վարչության պետին՝ նպաստի յուրաքանչյուր տեսակի մասով ապահովել

1) ոչ ուշ, քան մինչև վճարման ժամկետի նախորդ օրվա ժամը 15:00, ձևավորված վճարման ցուցակների հիման վրա վճարման ենթակա ընդհանուր

գումարի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությանը,

2) ոչ ուշ, քան վճարման ժամկետի օրը՝ մինչև ժամը 10:00, վճարման ցուցակների հիման վրա ձևավորված հայտերի սահմանված կարգով տրամադրումը ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությանը:

4. Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետին ապահովել՝

1) սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով՝ ֆինանսավորման հայտի ներկայացումը գանձապետական համակարգ,

2) սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետով՝ վճարման ենթակա գումարների փոխանցումը բանկերին:

5. Համագործակցության և տեղեկատվության փոխանակման բաժնի պետին՝ ապահովել սույն հրամանով սահմանված, ինչպես նաև Ծառայության միջոցով վճարվող այլ պարբերական և միանվագ դրամական վճարների վճարման վերաբերյալ սոցիալական հարթակներով իրազեկման աշխատանքների իրականացումը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ**

Հաստատված
Միասնական սոցիալական ծառայության պետի
2026 թվականի հոկտեմբերի 26-ի N հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանով մշակվող պարբերական և միանվագ դրամական վճարների գումարների վճարման

Դրամական վճարի անվանումը	Վճարման ժամկետը
Կենսաթոշակ, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ	Յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը
3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ	Յուրաքանչյուր ամսվա 6-ին
Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ	Յուրաքանչյուր ամսվա 9-ին
Թաղման նպաստ	Յուրաքանչյուր երկուշաբթի և հինգշաբթի
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ	Յուրաքանչյուր հինգշաբթի